ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 1-ին, շաբաթ.—*Այսօր երեկոյան ժամը 5-ին հոգևոր ճեմարանի հանդիսությանց սրահում դասախոսություն կարդաց ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը՝ «Օրենք և հնազանդություն» նյութի շուրջ։*

Դասախոսությանը ներկա էին վանքի միաբանությունն ու ճեմարանի ուսանողությունը։

*
* *

Հոկտեմբերի 2-ին, հինգշաբթի.—*Մայր տաճարում, Իշման ս. սեղանի վրա, քահանայական ուխտի սուրբ պատարագ մատուցեց Կ. Պոլսի հայոց պատրիարք տ. Շնորհք սրբազանը։*

Ս. պատարագին ներկա էր Մայր Աթոռի ողջ միաբանությունը։

*
* *

Հոկտեմբերի 3-ին, ուրբաթ.—*Ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Մեսրոպ ծ. վրդ. Սեմերճյանը հոկտեմբերի 3-ին, 14-ին, 20-ին, 24-ին և 28-ին կարդաց հետեվյալ դասախոսությունները Մայր Աթոռի միաբանության ու հոգևոր ճեմարանի ուսանողության համար՝ «Տերունական աղոթքի մեկնությունը», «Աստուծո քրիստոնեական ըմբռնումը», «Մեր եկեղեցվո միարնակ վարդապետությունը», «Հոգևորականը և սեռական կյանքը», «Հավատամքի մեկնությունը» և «Աստուծո մարդեղությունը և նպատակը» նյութերի շուրջ։*

*
* *

Հոկտեմբերի 7-ին, երեքշաբթի.—*Ս. Հռիփսիմեի տաճարում այսօր քահանայական ուխտի իր երկրորդ պատարագը մատուցեց տ. Շնորհք սրբազան պատրիարքը։*

Ս. պատարագին ներկա էր Մայր Աթոռի միաբանությունը։

Նույն օրը, երեկոյան, սրբազան պատրիարք հայրը Վեհարանում Մայր Աթոռի սարկավագների ու հոգևոր ճեմարանի լատրանական սաների համար խոսեց «Հոգևորականի կոչումը» նյութի շուրջ։

*
* *

Հոկտեմբերի 9-ին, հինգշաբթի.—*Այսօր առավոտյան ս. Գայանեի տաճարում քահանայական ուխտի իր երրորդ պատարագը մատուցեց տ. Շնորհք սրբազան պատրիարք հայրը։*

Ս. պատարագին իր մասնակցությունը բերեց նաև Մայր Աթոռի միաբանությունը։

*
* *

Հոկտեմբերի 13-ին, երկուշաբթի.—*Երեկոյան ժամը 7-ին Վեհարանում գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի լիագումար նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։*

Ժողովին ներկա էին նաև Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի առաջնորդ տ. Սերովբե արքեպ.

Մանուկյանն ու Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ տ. Պարգև եպս. Գևորգյանը։

*
* *

Հոկտեմբերի 17-ին, ուրբաթ.—Հոգևոր ճեմարանի ընթերցասրահում այսօր, երեկոյան ժամը 6-ին, Մայր Աթոռի միաբանության և հոգևոր ճեմարանի սանների համար դասախոսություն կարդաց դոկտ. Ս. Սեհոնքյանը՝ «Աստվածաբանության և գիտության հաշտեցումը» թեմայի շուրջ։

*
* *

Հոկտեմբերի 19-ին, կիրակի.—Զ կիրակի զկնի Ս. Խաչի.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Ս. պատարագին ներկա էին նաև սփյուռքահայ բազում ուխտավորներ։

*
* *

Հոկտեմբերի 21-ին, երեքշաբթի.—երեկոյան ժամը 7-ին Վեհարանում գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ։

Ժողովին հրավիրվել էր նաև Անգլիայի հայրապետական պատվիրակ տ. Պսակ արքեպ. Թումայանը։

*
* *

Հոկտեմբերի 26-ին, կիրակի.—Գիտ Խաչ.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Շնորհը վրդ. Գասպարյանը։

Ս. պատարագի ընթացքին կուսակրոն քահանա ձեռնադրվեց բարեշնորհ Գրիգոր սարկավագ Բունիաթյանը՝ վերանվանվելով տ. Գրիգորիս աբեղա։

Ձեռնադրությունն ու օծումը կատարեց Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը, որը և «Հայր մեր»-ից առաջ խոսեց ոգեշունչ մի քարոզ՝ «Ի քեզ, Տէր, յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան» ընթերցվածով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Ս. պատարագին ներկա էին նաև բազում ուխտավորներ և հավատացյալներ։

Տ. Գրիգորիս աբեղա Բունիաթյանը ծնվել է էջմիածին քաղաքում 1946 թվականի օգոստոսի 31-ին։ Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում։ 1960 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան, որի դասարանական և լսարանական դասընթացները ավարտել է փայլուն հաջողությամբ 1966 թվականին։ Սարկավագ է ձեռնադրվել 1965 թվականին։ Որպես ավարտաճառ ներկայացրել է Շահապիվանի ժողովի մասին մի ուսումնասիրություն և ստացել է ճեմարանի ավարտական վկայական։ Աշխատել է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում և ապա որպես սարկավագ պաշտոնավարել է Օրջոնիկիձեի հայոց եկեղեցում։

Շնորհավորում ենք նորընծա տ. Գրիգորիս աբեղային և մաղթում, որ նա լինի հավատարիմ միաբանը ս. Էջմիածնի և «մշակ առանց ամօթոյ» մեր եկեղեցու ծառայության անդաստանի մեջ։

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 4-ին, Վեհարանում պաշտոնական ճաշկերույթ է տրվում Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ ճարտարապետ Միքայել Մազմանյանի և գրականագետ Սարգիս Մելիքսեթյանի պատվին՝ նրանց ծննդյան 70-ամյակի առիթով։

Ընդունելությանը ներկա էին բազում հրավիրյալներ։ Ընդունելության ժամանակ հարգելի հոբելյարներին ջերմորեն շնորհավորում են Վեհափառ Հայրապետը, տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, պրոֆ. Ա. Առաքելյանը, պրոֆ. Վ. Հարությունյանը, ՍՍՀՄ ժողովրդական արտիստներ Գուրգեն Ջանիբեկյանը, Ավետ Ավետիսյանը, պրոֆ. Կ. Ղաֆադարյանը, Ռաֆայել Իսրայելյանը, նկարիչ Գրիգոր Խանջյանը և ուրիշներ՝ նշելով հարգելի հոբելյարների գիտական-մասնագիտական-հասարակական ծառայությունները մեր մշակույթի զարգացման ընթացքում, ինչպես նաև նրանց աշխատակցությունը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողքին, նրա եկեղեցաշեն, հայրենանվեր ու հայրենասիրական գործունեության ճանապարհի վրա։

Վերջում երկու հոբելյարները ջերմ շնորհակալության և երախտագիտության խոսք են ասում Վեհափառ Հայրապետին՝ Նրա բարձր ուշադրության և գնահատության համար, ինչպես նաև ընդունելության առթիվ ներկաներից շատերի արտասանած ջերմ խոսքերի համար։

*
* *

Հոկտեմբերի 29-ին, չորեքշաբթի.—Այսօր երեկոյան Մայր Աթոռ ս. Էջմիածին այցելեցին՝ Մոսկվայում Ավստրիայի դեսպան

դոկտ. Վալտեր Վոտակը՝ իր հարգարժան տիկնոջ հետ, ինչպես նաև դոկտ. Ֆրանց Մայեր Կունթհոզը՝ Ավստրիայի գործարար ընկերության նախագահը։

Հարգելի հյուրերը Մայր տաճարի եկեղեցական արվեստի թանգարանը այցելելուց հետո, Վեհարանում, ջերմ մթնոլորտում, հանդիպում ունեցան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ։

Հայոց Հայրապետի և հյուրերի միջև տեղի ունեցավ սիրալիր զրույց։

*
* *

Հոկտեմբերի 30-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը ճեմարանի ուսանողության համար դասախոսություն կարդաց՝ «Մարդկային արժեքը» թեմայի շուրջ։

*
* *

Հոկտեմբերի 31-ին, ուրբաթ.—Այսօր ուխտավորաբար մայր հայրենիքում գտնվող Հռոմի Լևոնյան հայ վարժարանի տեսուչ տ. Ներսես վրդ. Սեթյանը հոգևոր ճեմարանի ընթերցասրահում դասախոսություն կարդաց՝ «Հոգևորականի պատրաստության մեջ գիտության բաժանումը» թեմայի շուրջ։

Դասախոսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունն ու ուսանողությունը։

*
* *

Նոյեմբերի 2-ին, կիրակի.—Ը կիրակի զկնի Ս. Խաչի.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

*
* *

Նոյեմբերի 4-ին, երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանում իր երկրորդ դասախոսությունը կարդաց տ. Ներսես վրդ. Սեթյանը՝ «Ազգասիրության իսկական իմաստը» նյութի շուրջ։

*
* *

Նոյեմբերի 9-ին, կիրակի.—Թ կիրակի զկնի Ս. Խաչի.

Մայր տաճարում պատարագեց տ. Հակոբ քհն. Հակոբյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

*
* *

Նոյեմբերի 16-ին, կիրակի.—Ժ կիրակի զկնի Ս. Խաչի.

Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Նշան քհն. Բեյլերյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

*
* *

Նոյեմբերի 20-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետին այցելեց հայ անվանի երգահան Արամ Խաչատրյանը։ Հայոց Հայրապետի և մեծանուն երաժշտագետի միջև տեղի ունեցավ մտերիմ զրույց՝ սրտագին մթնոլորտում։

*
* *

Նոյեմբերի 21-ին, ուրբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ տ. Հայկազուն արքեպիսկոպոսի, տ. Վահան եպիսկոպոսի, տ. Շնորհք վարդապետի, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանի և բարեշնորհ Հակոբ սրկ. Գյոկչյանի, Երևանում, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում, ներկա եղավ անմահ Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսավոր նիստին ու մեծ համերգին։

*
* *

Նոյեմբերի 23-ին, կիրակի.—Բ կիրակի Յիսնակաց.

Այսօր Մայր տաճարում եպիսկոպոսական հանդիսավոր ս. պատարագ մատուցեց տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

«Հայր մեր»-ից առաջ, «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը երգելուց հետո, մեծ հանդիսավորությամբ տ. Նարեկ վրդ. Շաքարյանը ընթերցեց Վեհափառ Հայրապետի կոնդակը՝ նվիրված մեծ Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակին։

Ապա Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կոնդակի ընթերցումից հետո, կատարվեց հոգեհանգստյան հանդիսավոր արարողություն՝ ի հիշատակ Կոմիտաս վարդապետի, ի ներկայության սփյուռքահայ բազում ուխտավորների և հավատացյալների։

Ապա նույնպես հոգեհանգստյան պաշտոն կատարվեց Մայր Աթոռի բարերար, ամերի-

կահայ ծանոթ ազգային Հարություն Մովսիսյանի (Հերրի Պըրտ) հիշատակին և հոգու խաղաղության համար։

Հավարտ ս. պատարագի Վեհարանում տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ Մայր տաճարի երգեցիկ խմբի։

Ճաշկերույթին ներկա էին նաև հայ մեծ երգահան Արամ Խաչատրյանը և ռուս մեծ երգահան Դ. Կոբալևսկին, արտասահմանյան հայ բազմաթիվ խմբավարներ և հարգելի հյուրեր, որոնք Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակի հանդիսություններին մասնակցելու համար ժամանել էին Մայր հայրենիք։

*
* *

Նոյեմբերի 28-ին, ուրբաթ.—Այսօր երեկոյան ժամը 16-ին Մայր Աթոռ ս. Էջմիածին այցելեց Սովետական Հայաստանում գտնվող Դանիայի արտաքին գործերի նախարար Պոուլ Հարթլինգը՝ իր հարգելի տիկնոջ հետ։

Հարգելի հյուրերը Մայր տաճար և նրան առընթեր եկեղեցական արվեստի թանգարան այցելելուց հետո, ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից Վեհարանում։

Հայոց Հայրապետի և պատվարժան հյուրերի միջև տեղի ունեցավ սիրալիր զրույց՝ մտերմիկ մթնոլորտում։

*
* *

Նոյեմբերի 29-ին, շաբաթ—Այսօր առավոտյան ժամը 11.30-ին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 49-րդ տարեդարձի տոնի առթիվ, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց կառավարական մաղթանք, որին ներկա էին Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Հոգևոր ճեմարանի տեսչական ու դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և հավատացյալների հոծ բազմությունը։

Ազգային պետական տոնի առթիվ փակ էր Հոգևոր ճեմարանը։

Ժամը 12.30-ին ազգային պետական մեծ տոնի առթիվ Հոգևոր ճեմարանի հարկի տակ տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի։

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Հոգևոր ճեմարանի տեսչական ու դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և բազում ներկաներ։

Հանդիսությունը բացվեց Վեհափառ Հայրապետի աղոթքով և պետական հիմնի նվագով։

Հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը իր բացման խոսքի մեջ նշեց հայրենիք ունենալու քաղցրությունը և բախտավորությունը անցյալում մեզ նման տառապած փոքր և դարերով իր ազատությունից զրկված մի ժողովրդի համար և շեշտեց հայ հոգևորականության ևս հավատարմության և հայրենասիրության ուխտը դեպի մեր վերածնված մայր հայրենիքն ու նրա պետականությունը։

Այնուհետև գործադրության դրվեց գեղարվեստական մի ծրագիր՝ արտասանություններից և երգերից բաղկացած՝ օրվա խորհուրդը շեշտող։ Օրվա բանախոսն էր Հոգևոր ճեմարանի վերակացու Բ. Թաշճյանը։ Հարգելի բանախոսը իր գրավոր զեկուցագրի մեջ հանգամանորեն ներկայացրեց հայ ժողովրդի անցյալի տխուր պատմությունը մինչև 1920 թվականը և ապա վեր հանեց 1920 թվականի նոյեմբերի 29-ով իր ազատ կյանքըն ու պետականությունը նվաճած մեր ժողովրդի 49 տարիների ընթացքում ձեռք բերած նվաճումները՝ կյանքի բոլոր բնագավառներում։

Հանդիսությունը փակվեց Վեհափառ Հայրապետի հայրենասիրական պատգամով և օրհնությամբ։

Նույն օրը, երեկոյան ժամը 6-ին, Հոգևոր ճեմարանում դասախոսություն կարդաց ճեմարանի դասախոս, աշխարհագրագետ Կ. Ավետիսյանը՝ «Աշխարհի յոթ հրաշալիքները» թեմայով։

Դասախոսությանը ներկա էին Հոգևոր ճեմարանի տեսչական կազմը, Մայր Աթոռի միաբանությունն ու ճեմարանի ուսանողությունը։

*
* *

Նոյեմբերի 30-ին, կիրակի.—Մայր Աթոռում իր անդրանիկ ս. պատարագը մատուցեց նորընծա տ. Գրիգորիս աբեղա Բունիաթյանը։

Հոգեշնորհ հայր սուրբը «Հայր մեր»-ից առաջ տվեց իր առաջին քարոզը՝ «Զմի խընդրեցից ի Տեառնէ» բնաբանով։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Ս. պատարագին ներկա էին նաև սփյուռքահայ բազում ուխտավորներ։